



ՊՐՈՖ. ԴՈՆՏ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

(Գիտության վաստակավոր գործիչ)

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿՑՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

այլերի և վրացիների համագործակցությունը գրականության ապարնելում նույնքան հին է, որքան հին է նույն ժողովուրդների պետականությունը (Բ—Ա. դ. դ. մ. թ. ա.) և քրիստոնեական մշակույթին կցվելը (Գ. դ.): Թեև գրական առանձին սյուժեների դուրսգալությունն, իբրև հետևանք բառատեղծման և վիպաստեղծման միասնական պրոցեսի, տանում է մեզ հեռու՝ դարերի խորքերը, երբ հայ-արմենական և քարթվիլական (քարթվիլական) ցեղերը ղեռնոր էին ձևավորվել (ի նկատի ունենք Սասունցի Դավիթ)՝ առանձին գծերը՝ համեմատությամբ վրացական Ամիրանիի գրույցի հետ և այլն)¹:

Հայ մատենագրության այլևայլ նմուշները տարբեր ժամանակ, սկսած է—Թ. դ. դ., թարգմանվել են վրացերեն: Այսպիսիք են Ագաթանգեղոսի, Փավստոսի, Փարպեցու, Խորենացու և Օրբելյանի պատմություններից քաղած գլուխները կամ պատառիկները, որոնք ի բաց առեալ Օրբելյանից՝ թարգմանվել են այսպես կոչված Տայք-Կղարջյան քաղկեդոնիկ դպրոցի գործունեության գծով: Միաժամանակ, այդ դպրոցի շնորհիվ է, որ վրաց գրականությունը հարստանում է փիլիսոփայական-քննադատական գրվածքների թարգմանություններով հայերենից (Նաիրիան Կիարացի, Գրիգոր Նյուացի և այլն): Նույնը պետք է ասել և ուստի ու հայ սրբերի և վկաների վարք-վկայությունների

մասին, որոնք մի ժողովածուի մեջ են ամփոփված Աթոնի Իվերոն վանքի հավաքածուում:

Հայ և Վրաց քաղկեդոնիկ գրականության ազդակցության տեսակետից բնորոշ է, որ Խորենացին, ըստ Թ. դարու վրաց պատմիչի (Արսեն Սափարացու), քաղկեդոնիկ է ներկայացրած, իսկ Դավիթ Անհաղթը, հայերից անարգվելով, ըստ Առաքել Սյունեցու ցուցմունքի, Վրաստանում է գտնում ապաստան, ուր և մնում է ցմահ²: Ի դեպ, նշենք, որ մյուս Դավիթն էլ՝ Սասունցին, անհաղթներից անհաղթը, ըստ հայ ժողովրդական վեպի, Գյուրջստան—Վրաստան է ուղևորվում իր փահլանների համար սիրուն հարսնացուներ որոնելու նպատակով:

Հայ-վրացական փոխհարաբերությունների պատմության լուսավոր էջերն է կազմում Հաղթա-Սանահինյան գրական-գիտական դպրոցն իր ճյուղավորություններով (Հաղարձին, Գեորգի, Գոշավանք, Խորանաշատ և այլն): Հայտնի է Հովհաննես Սարկավազ վարդապետի մեծ հռչակը վրաց արքունիքում՝ Դավիթ Շինողի օրոք, երբ նա մասնակցում է Թրիլիսիում 1123—1125 թվականներին գումարված վրաց-հայկական եկեղեցական ժողովին՝ իբրև պարագլուխ «Հայ եպիսկոպոսների ու վարդապետների, որոնք հարձենում էին նրանով, թե ինչպես իրենք հասել են ուսման և գիտությանց դազաթնակետին» (ըստ վրացական աղբյուրի): Մասնավորապես Սարկավազի գործերից

¹ Տե՛ս մեր «Արտավազ և Մենքի հետքերը Վրաստանում», «Բանբեր էջմիածնի գիտական ինստիտուտի», I—II, 1921—1922 թ. թ., էջ 93—104:

² Տե՛ս մեր «Դավիթ Անհաղթի Վրաստանում լինելու հարցի շուրջը», «Գրական-բանասիրական հետազոտություններ», I, Երևան, 1946 թ., էջ 243—267:

հայտնի է «Վասն շարժման և սասանութեան երկրի» երկասիրությունը, որ նա գրել է վրաց մի եպիսկոպոսի խնդրով (ի նկատի ունենք «Հարցմունք» վրաց եպիսկոպոսի ի Սարկևազ վարդապետէն՝ Գիր գոլով յազգս ամենալոյս, եթէ զիս ըդ ունի երգ սաղմոսի ասացեալ... Դու խորտակեցեր զգուխ վիշապաց» և այլն, որ հասել է մեզ Երուսաղեմի Ս. Հակոբեայնց մատենադարանի մի հազվագյուտ ձեռագրում³։ Սարկևազն, անշուշտ, ծանոթ պիտի լիներ հիշյալ Ժողովի մասնակից՝ վրաց աստվածաբան և փիլիսոփա Արսեն Իղալթոյեցու հետ։

Նույնպիսի հույսի թամար թագուհու օրոք (1184—1213 թ. թ.) ստացել է Մխիթար Գոշը, որի «Դատաստանագիրք Հայոց»-ն ու «Գծագրութիւն... յաղագս վրաց» երկերը վրաց լեզվին և գրականության քաջածանոթ հեղինակի գրչից՝ ելած գործերի տպավորություն են թողնում։

ԺԲ դարում վրացերենից հայերեն է թարգմանվում վրաց տարեգրության («Քարթլիս-ցխովրեբա»-յի) հնագույն խմբագրությունը⁴։ Հայերեն թարգմանությանը ծանոթ է ԺԲ դարու հայ պատմիչ Մխիթար Անեցին, իսկ վերջինիս միջնորդությամբ նաև ԺԳ դարու պատմիչներ Վարդան Արեւելցին, Մխիթար Այրիվանեցին և Ստեփանոս Օրբելյանը, որոնք միաբերան (բացի Այրիվանեցուց) տալիս են «Քարթլիս-ցխովրեբա» անունը հայատառ գրությամբ։

ԺԲ—ԺԳ դարերում Հայաստանում ծաղկում էր Պղնձահանքի (այժմյան Ախտալան կամ Մեղրածորը) գրական-գիտական դպրոցը, որի կարկառուն ներկայացուցիչն էր Սիմեոն Պղնձահանքեցի⁵։ Վերջինիս աշխատասիրությամբ, խմբագրությամբ և, առհասարակ, ղեկավարությամբ կատարվում էին փիլիսոփայական բնույթի գրվածքների թարգմանությունները վրացերենից՝ ԺԱ—ԺԲ դարերի վրաց հույակավոր փիլիսոփա Իոանն (Հովհան) Պետրիժի գրական ժառանգությունից։

³ Հրատարակել ենք մենք «ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի Տեղեկագրում», 1943 թ., № 1, էջ 78—80։ Տե՛ս նաև Գաբրիել Ա. Կաթողիկոսի «Հիշատակարանք ձեռագրաց»-ի մեջ, Անթիլիաս, 1950 թ.։

⁴ Հրատարակվել է երկիցս՝ Վենետիկում 1884 թ. Աթանաս վարդապետ Բիրյույանի խմբագրությամբ և Թրիլիսիում 1953 թ. պրոֆ. Իլիա Աբուլաձեի աշխատասիրությամբ։

⁵ Այս Սիմեոնի մասին մանրամասն տե՛ս Ներսես վարդապետ Ակինյան, «Սիմեոն Պղնձահանքեցի և իր թարգմանությունները», «Հանդես ամսօրեայ», 1947—1949 թ. թ.։

ԺԷ—ԺԸ դարերում վրաց քերականագիտական և բառարանային գրականության վրա որոշ ազդեցություն է ունեցել համապատասխան հայ գրականությունը, ինչպես այդ վաղուց ապացուցել է պրոֆ. Ա. Ցաքարեին։ Վրաց հույակավոր առակախոս և բառարանագետ Սուխան-Սարա Օրբելիանին իր «Բառարան»-ի առաջաբանում նշում է, որ ի թիվս այլ աղբյուրների՝ նրա ձեռքի տակ է եղել հայերեն «Բառգիրք»-ը։ Պրոֆ. Իլ. Աբուլաձեի հետուցումովսմբ ստուգվեց, որ Սարա Օրբելիանի այդ աղբյուրը եղել է 1666 թվականին Ամստերդամում հրատարակված հայերեն Աստվածաշնչին կցված ցանկը։

ԺԷ—ԺԸ դարերում վրաց գրականության բարգավաճման որոշ շափով նպաստել են մի շարք հայազն գործեցիներ, օրինակ Գեորգ ԺԱ թագավորի դիվանագլխի Բեդթարեզը, որ հայտնի է իբրև բանաստեղծ և «Վագրենավոր»-ի արտագրող. «Քիթը կտրած» Փեշանդ Փաշվի-Բերողաձեն (Խիթարով), որ հեղինակն է երկու պոեմի՝ «Շահնավազիանի»-ի և «Փիրմալիանի»-ի (վերջինս, դժբախտաբար, մեզ չի հասել)։ Վրացախոս և մասնագետ Նազգաժ Փարսադան Գորգիշանիձեն, որ կազմել է ստվար «Վրաստանի պատմություն» և համեմատական բառարան. Գեորգ վարդապետ Կակարենց, որ, լինելով Կտուց անապատի (Վասպուրական) միաբան՝ վրացերեն է թարգմանել Գրիգոր Տաթևացու և Ղազար Ջահկեցու երկերից քաղած առանձին գլուխներ, նաև գրել է մի շարք բանաստեղծություններ վրացերեն և հայերեն⁶։

ԺԸ դարու սկզբներին Վախտանգ Զ թագավորի հրամանով հայերենից թարգմանվում է վրացերեն այսպես կոչված ասորա-հոմեական դատաստանագիրքը, ինչպես և Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ը, որոնք կազմելով միաձուլ «Հայոց օրենագիրք»-ը⁷, մուծվում են նույն Վախտանգի օրենքների Ժողովածուի մեջ։

Սույն ԺԸ դարի ընթացքում վրացերեն են թարգմանվում Վենետիկի Մխիթարյանների առանձին գործերը, օրինակ՝ Մխիթար վարդապետ Սեբաստացու քերականությունն ամբողջապես (նույնի «Հայկազան Բառարան»-ն ևս թարգմանված է, սակայն շատ ուշ՝ ԺԹ դարի վերջերը), այլև նույնի քերականության կցված ցանկը՝ վերածվելով հայ-վրացերեն բառարանի, որից մի քանի ձեռագիր օրինակ է հասել մեզ, ապա Միքայել վարդապետ Զամչյանի «Պատմութիւն Հա-

⁶ Տե՛ս մեր «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. III, Նրևան, 1957 թ.։

⁷ Տե՛ս մեր հրատարակությունը Թրիլիսի, 1927 թ.։

յոց»-ը, որից մեզ հասել են միայն Բ հատորի մի շարք գլուխներ, Ղուկաս վարդապետ Ինժիճյանի աշխարհագրության դասագրքից մի պատառիկ և այլն: Թարգմանությունների նախաձեռնողներն են արքայազն Անտոն Ա կաթողիկոսը, հայ քահանաներից Փրիլպպոս Ղայթմազյանը, որ մի ժամանակ Թբիլիսիի սեմինարիայի «սքոլապետ»-ն էր, այսինքն ռեկտորը, Տեր Պետրոսը, Տեր Սամվելը և ուրիշները, որոնց աշխատասիրությամբ թարգմանվում են նաև «Ախրարագին», «Կարարագին», «Զիարուժարան»-ներ և այլն: Ինքն Անտոնը անձամբ ծանոթ է Ղազար կաթողիկոս Զահկեցուն ու վերջինիս «Գրախոցանկալի» կոչված գրքին, որ հիշում է իր գրվածքում, ինչպես նաև Կղեմես Գալանոսի մի աշխատությանը, որի անունը չի տալիս: Այսպես թարգմանվում է նաև Վարդան Այգեկցու «Աղուէնագիրք»-ը:

Վերոհիշյալ վախտանգ Զ-ի արքունիքի հետ էր կապված, ի միջի այլոց, Նաղաշ-Հովնաթանը, որը Թբիլիսիումն էր հորինել իր «Գյուրջստանա գոզալներ» սքանչելի բանաստեղծությունը: Իսկ Հերակլ Բ-ի պալատական երգիչն էր, ինչպես հայտնի է, մեծագույն աշուղ-բանաստեղծ Սալաթ-Նովան, որը մի տեսակ շաղախ էր անդրկովկասյան ժողովուրդների համերաշխության և եղբայրության: Սալաթ-Նովայի հետնորդն էր Շամչի-Մելքոն, որը բանաստեղծություններ է հորինել թե՛ հայերեն և թե՛ վրացերեն:

Գալով նոր շրջանին և ժԹ—ի դարերին, պետք է նշել, որ հայ-վրացական գրական կապերի հաստատման գործում որոշ առաջադիմական դեր է խաղացել, նախ, Ներսիսյան դպրոցը, ուր մի ժամանակ, ի թիվս այլ առարկաների, դասավանդվում էր և վրացերենը և ուր, ի միջի այլոց, մի քանի տարվա ընթացքում ուսուցչություն են արել վրաց հայտնի պատմաբան-հնագետ Պլատոն Իոսելիանին և Սուվխանովը: Ապա նշելու է հայ և վրաց մամուլի, գրական հաստատությունների և թատրոնի գերը:

Խ. Արուվյանի հանձարը ծաղկեց ու բացվեց Թբիլիսիում, ուր գրվել են նրա «Վերք Հայաստանի»-ն, «Օմստանա»-ն, «Թուրքի աղջիկ»-ը և այլն: Սրանցից վերջինի սյուժեն բացարձակապես Թբիլիսիի կյանքից է վերցրած: Իսկ Արուվյանի վրացի ընկերներից Զուբալաշվիլու անունը Շեքսպիրի «Ռոմեո և Զուլիետա»-յի վրացերեն թարգմանության հրատարակության հետ է կապված:

Ալ. Զավճավաձեի «Գրուկա»-ն, որ ի նկատի ունի Սեանա լիճը, և Ն. Բարաթաշվիլու «Քարթլիի ձակատագիրը», անշուշտ, ձայնակցում են Արուվյանի «Վերք»-ին, ու-

րոնք միասին վերցրած՝ միևնույն դարաշրջանին նվիրված ու միանման ցավերը ցուցաբերող գրվածքներ են:

ԺԹ դարի գործիչ հայերից հայտնի է Ստեփան Փերշանգովը, իրեն վրաց բանաստեղծ, և Զուրաբ Անտոնովը, իրեն վրաց շնորհալի գրամատուրգ, որի «Արևի խավարումը» կատակերգությունը արտացոլում է նույն միջավայրի, որը մի քիչ հետո անց Գ. Սոմադովյանի և Ա. Ցաղարեիի պիեսների շարքը: Սակայն Սոմադովյանն, իրեն հայ թատերագիր, նույնպես սիրելի է և վրացիներին, որոնք ժամանակին թարգմանել են նրա գրեթե բոլոր պիեսները⁸:

Առանձին սիրով և խնամքով թարգմանվել են արձակագիրներից Բաֆֆին, Երվանդադեն, իսկ բանաստեղծներից Թումանյանը, որի Վրաստանին նվիրված տառամալորները, պոեմ-բալլադները, հեքիաթները և այլն վրաց թարգմանական գրականության զարդն են կազմում:

Նմանապես հայ ընթերցողին սիրելի են վրաց կլասիկների երկերը՝ Ա. Ղազեբգիրի, է. Նինոշվիլու, Վաթա Փշավելայի և ուրիշների, որոնց հայերեն թարգմանությունները մասամբ հրատարակված են:

Նախապատերազմյան և հոտպատերազմյան տարիների ընթացքում տեղի ունեցած հորելյանական տոնակատարությունները զգալի չափով նպաստեցին հայ և վրաց գրականությունների մերձեցմանը:

1937 թվականին Եթեթ Լուսթավելու հուբելյանի կապակցությամբ հայ հասարակությունը ստացավ «Վազրենավոր»-ի ամբողջական թարգմանությունը (Գ. Ասատուրի): Նույն թվականին Իլիա Զավճավաձեի հուբելյանի առնչությամբ հրատարակվեցին հայերեն նրա ընտիր երկերի ժողովածուները Թբիլիսիում և Երևանում: 1940 թվականին, Ակակի Մերեթիլու հոբելյանի առթիվ, հրատարակվեցին հայերեն նրա ընտիր երկերի ժողովածուները Թբիլիսիում և Երևանում: 1945 թվականին, Ն. Բարաթաշվիլու հոբելյանի առթիվ, Թբիլիսիում հրատարակվեց հայերեն նրա «Հատընտիր»-ը, իսկ 1848 թվականին Երևանում՝ Ալ. Ղազեբգիրի «Պատմվածքներ»-ը, ապա 1941, 1951 և 1956 թվականներին՝ հաջորդաբար Ի. Գրիշաշվիլու «Հատընտիր»-ը: Եվ այսպես շարունակ նաև ուրիշ գրողների երկերը:

Մյուս կողմից, 1939 թվականին, Թումանյանի հոբելյանի կապակցությամբ լույս ընծայվեցին նրա «Ընտիր երկեր»-ի, «Թմկաբերդի առում»-ի և «Հեքիաթներ»-ի վրացե-

⁸ Տե՛ս Ի. Գրիշաշվիլու խմբագրությանը լույս տեսած միահատորակը, Թբիլիսի, 1950 թ.:

րեն թարգմանությունները, ինչպես և Գ. Դոդոխյանի երկերի առաջին հատորը հայերեն և վրացերեն (վերջինս՝ այժմ հանգուցյալ դոցենտ Ի. Բեգլարովի աշխատությունը)։ Նույն թվականին, «Սասունցի Դավիթ»-ի հոբելյանի օրերին, վրաց հասարակությունն ստացավ հայկական վեպի ամբողջական թարգմանությունը՝ կատարված տաս բանաստեղծների կողմից, նմանապես պոեմին ու նրա էպոսային նվիրված հատուկ ժողովածու Թբիլիսիի Պետական լայն հրատարակությանը, ուր, ի միջի այլոց, գետեղված են Հ. Թումանյանի «Սասունցի Դավիթ»-ի և Ա. Իսահակյանի «Սասնա Մհեր»-ի թարգմանությունները։

Վերջին տարիների ընթացքում վրաց ընթերցող հասարակությունը ստացել է վրացերեն թարգմանությունը Հ. Թումանյանի և Ա. Իսահակյանի «Հատրնտիլ»-ները (առաջինի՝ 1924, 1930, 1938, 1948 և 1956 թ. թ., երկրորդի՝ 1955 թ.), Ա. Շիրվանդադեի «Նամուս»-ը (1931 և 1948 թ. թ.) և «Քառս»-ը (1953 թ.), Մերուն Թորոմյանի «Հատրնտիր»-ը (1948 թ.), Գարեգին Սևունցի «Թեհրան»-ը (1955 թ.), Վախտանգ Անանյանի «Սևանի ափին»-ը (1956 թ.) և այլն։

Վրաց ընթերցողը առանձին սիրով է վերաբերվում Գ. Բաշինջադյանին, որի ծնունդ-

յան հարյուրամյակը նշվելու է սույն տարվա սեպտեմբեր ամսին։

Հայաստանի Ստալինական գրողների միության օրգան «Գրական թերթ»-ը (Երևանում) և վրացական «Գրական թերթ»-ը (Թբիլիսիում) պարբերաբար նվիրում են իրենց էջերը՝ առաջինը վրաց գրականության խնդիրների տեսությունը և վրաց գրողների գոհարների ժողովրդականացմանը հայ հասարակության մեջ, իսկ երկրորդը՝ հայ գրականության խնդիրների լուսաբանմանը և հայ գրողների գոհարների ժողովրդականացմանը վրաց հասարակության մեջ։ Բացի դրանից, փոխադարձ համաձայնությունը, 1953 թվականին «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի № 8-ը ամբողջապես նվիրվեց վրաց սովետական գրողներից թարգմանված նմուշներին, ինչպես և «Մոսթորի» ամսագրի № 8-ը ամբողջապես նվիրվեց սովետահայ գրողներին։

Այսպիսով վրաց գրականության դոհարները հետզհետե մտնում են հայ գրականության գանձարանի մեջ, ինչպես և հայ գրականության դոհարները՝ վրաց գրականության գանձարանը, նպաստելով ժողովուրդների բարեկամության և համերաշխության վեհ գաղափարին։

